Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-17/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 15.11.2017թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ

Մ. Սարգսյան – ՀՀ ՖՆ աշխատակազմի գործերի կառավարման վարչության պետ

Անդամներ

Է. Պողոսյան – ՀՀ ՖՆ աշխատակազմի գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի պետ - վարչության պետի տեղակալ

Հ. Ղազարյան - ՀՀ ՖՆ աշխատակազմի գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

Մ. Միքայելյան - ՀՀ ՖՆ աշխատակազմի գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

Կ. Սիրունյան - ՀՀ ՖՆ աշխատակազմի գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի տնտեսվար

Գնումները համակարգող

Մ. Սարգսյան՝ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի պետ

1. **Տեղեկություններ հայտերի բացման մասին**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին**

1.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-17/11» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01531784, հասցե՝ ք. Երևան, Չարենցի 25, էլ հասցե՝ ataroyan@ampg.am

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովը ընդունեց ի գիտություն, որ.

1	«Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ	Հայտում առկա տուժանքի մասին համաձայնագրում բացակայում է մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-17/11 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկած գները ներկայացվում են ստորև.

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)		
		«Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ		
		Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին
1	*ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության փաստաթղթի (կտրոնի) տպագրական և առաքման ծառայության* ծառայություն	2100000	420000	2520000

Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա

Հանձնաժողովը որոշեց.

Հարցում կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն վերոգրյալ անհամապատասխանության վերաբերյալ (գրությունը կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

5. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը**

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-17/11 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել հրավերի փաստաթղթերի ներկայացման և եզրակացության ներկայացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Սարգսյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Է. Պողոսյան

_____ Հ. Ղազարյան

_____ Մ. Միքայելյան

_____ Կ. Սիրունյան

Գնումները համակարգող՝ _____ Մ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Էլ. փոստ՝ headofstaff@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 044
Վեբ կայք՝ www.minfin.am

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թամազյան

Հիմք ընդունելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ խնդրում ենք տրամադրել մեթոդական օժանդակություն և ներկայացնել պարզաբանում ներքոգրյալ հարցի վերաբերյալ՝

Գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան մասնակիցը ներկայացրել է հայտ, որում առկա տուժանքի մասին համաձայնագրում բացակայում է մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):

Գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխան վերոգրյալ փաստաթուղթը շտկման ենթակա չէ և անհամապատասխանությունների դեպքում հայտը ենթակա է մերժման:

Նման դեպքում մասնակցի հայտը մերժման ենթակա է թե՞ ոչ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կապ. գնումների գործընթացի սպասարկման բաժին
Հեռ՝ 011 800-114

Արձանագրություն 3

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-17/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17.11.2017թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ

Մ. Սարգսյան – ՀՀ ՖՆ աշխատակազմի գործերի կառավարման վարչության պետ

Անդամներ

Է. Պողոսյան – ՀՀ ՖՆ աշխատակազմի գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի պետ - վարչության պետի տեղակալ

Հ. Ղազարյան - ՀՀ ՖՆ աշխատակազմի գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

Մ. Միքայելյան - ՀՀ ՖՆ աշխատակազմի գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

Կ. Սիրունյան - ՀՀ ՖՆ աշխատակազմի գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի տնտեսվար

Գնումները համակարգող

Մ. Սարգսյան՝ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի պետ

1. **Տեղեկություններ ՀՀ ֆինանսների նախարարություն կատարված հարցման և հայտերում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ**

1. ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանման համաձայն «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտերի գնահատումը իրականացվում է գնահատող հանձնաժողովի որոշմամբ: (գրությունը կցվում է):

Հանձնաժողովը որոշեց.

1. «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

2. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ին:

3. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

4. Հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ – ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա

դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ -6, դեմ – 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-17/11 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել հրավերի փաստաթղթերի ներկայացման և եզրակացության ներկայացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Սարգսյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Է. Պողոսյան

_____ Հ. Ղազարյան

_____ Մ. Միքայելյան

_____ Կ. Սիրունյան

Գնումները համակարգող՝ _____ Մ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 , ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 15.11.2017թ.
թիվ 1/18-3/20845-17

Հարգելի պարոն Գևորգյան

Ուսումնասիրելով Ձեր վերոնշյալ գրությունը (այսուհետ՝ Գրություն)՝ հայտնում ենք հետևյալը.

գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված պահանջներով: Մասնավորապես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Իսկ նույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Վերոգրյալով պայմանավորված հայտնում ենք, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ

Կատ. Հանրային ֆինանսների կառավարման
մեթոդաբանության վարչություն
հեռ. 011 800 258